ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 1

ք. Հրազդան **10. փետրվարի 2015 թ.**

ՀՀ Կոտայքի մարզպետարանը ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր ֆինանսիստ՝ Մ.Գարեգինյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա/այսուհետ՝ Պատվիրատու/, մի կողմից և <<Կոտայքի մշակույթի կենտրոն>>ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Ա.Սիմոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով հաստատված՝ <<Մարզերում մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրի կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը ստանձնում է իրականացնել մշակութային միջոցառումների կազմակերպման պարտավորություն:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում, որը համարվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

2.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կատարողը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կատարողը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պատվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կատարողին

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պատվիրատուի բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պատվիրատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

3. Մոնիթորինգը

3.1. Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պատվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայությունների գինը կազմում է 2404000 /երկու միլիոն չորսհարյուր չորս հազար / ՀՀ դրամ:

4.2 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.1 կետում նշված գումարը Կատորողին վճարում է մշակութային միջոցառումների կազմակերպման ժամանակացույցի համաձայն՝ /հավելված / յուրաքանչյուր միջոցառման կազմակերպման համար նախատեսված գումարը առնվազն հինգ օր առաջ փոխանցելով Կատարողի հաշվարկային հաշվին:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կատարողի վճարվելիք գումարներից:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրի ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը:

7.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.3 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
ՀՀ Կոտայքի մարզպետարան
ք.Հրազդան, Կենտրոն վարչ.շենք
հ/հ 900121186036
հվհհ 03014577
Հրազդանի ՏԳԲ

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար-
գլխավոր ֆինանսիստ

Մ.Գարեգինյան

Կ.Տ.

«ԿԱՏԱՐՈՂ»
«Կոտայքի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ
ք.Հրազդան, Սպանդարյան 41
հ/հ 163158121893
հվհհ 03008809
ՀԷԲ Հրազդանի մասնաճյուղ

«Կոտայքի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն

Ա.Սիմոնյան

Կ.Տ.

Հավելված

2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԸՍՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/հ	**Միջոցառման անվանումը**	**Կատարման ժամկետը**	**Գումարը /հազ. դրամով/**
1.	Ասմունքի մարզային մրցույթ-փառատոն	մարտ	270.0
2.	Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակին նվիրված միջոցառումներ	ապրիլ	550.0
3.	Մայիսյան հաղթանակներին նվիրված տոնակատարություններ	մայիսի 8-10	320.0
4.	Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սաների մարզային մրցույթ-փառատոն	մայիս	300.0
5.	Անկախության օրվան նվիրված մարզային միջոցառում-համերգ	սեպտեմբեր	300.0
6.	<<Կոտայք-2015>> պարարվեստի մարզային մրցույթ-փառատոն	հոկտեմբեր	350.0
7.	Գեղանկարչության, կիրառական-դեկորատիվ արվեստի մարզային ցուցահանդես	նոյեմբեր	314.0
	Ընդամենը		**2404.0**